ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԲԵՌԼԻՆԻ 1878 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ ՇՐՋԱՆՈՒՄ

Դ. Ա. ԴԱԼՈՅԱՆ
ՀՍՍ ԳԱԱ ակադեմիկոս

1876—77 թթ. Արևելյան ճգնաժամը խիստ կերպով սրեց եվրոպական տերությունների հակասությունները։ Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր այդ ճգնաժամն օգտագործել իր աշխարհակալական նպատակների իրականացման համար և որոշակի շահագրգռվածություն էր դրսևորում ռուս-թուրքական առճակատումը խորացնելու հարցում։ Մի կողմ նետվեց 1876 թ. մայիսի 13-ին Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի միջև ստորագրված Բեռլինի հուշագիրը, որով պատրաստակամություն էր հայտնվում պաշտպանելու Թուրքիայի քրիստոնյա բնակչության անվտանգությունը։

Ռուսաստանը կրավորական դիրք չէր գրավում և հույս ուներ, որ Թուրքիայում քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների ակտիվացումը նպաստավոր պայմաններ են ստեղծում իր զավթողական պլանների իրագործման համար։

Հայերի, հույների և քրիստոնյա մյուս ժողովուրդների ազատագրական շարժումների գործիչները պաշտպանում էին Ռուսաստանի նվաճողական բաղաքականությունը՝ դրանում տեսնելով Թուրքական բռնակալական տիրապետությունից ազատվելու իրենց հնարավորություններից մեկը։ Նրանք, միաժամանակ, մեծ հույսեր էին կապում եվրոպական տերությունների հետ, որոնք ևս, օգտագործելով քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժումները, ձգտում էին Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոցով հասնել իրենց քաղաքական պլանների իրագործմանը։

Այս հողի վրա Ռուսաստանի և եվրոպական տերությունների միջև մղվող պայքարը սիավորել էր վերջիններիս ընդդեմ Ռուսաստանի։ Եթե Ռուսաստանը տեր դառնար սևծովյան նեղուցներին, որոնք նրա մշտական տենչանքի առարկան էին, և գրավեր Արևմտյան Հայաստանը, դա կարող էր սպառնալ Եվրոպական բոլոր տերությունների կենսական շահերին։

1877 թ. ապրիլի 23-ին խզվեցին դիվանագիտական հարաբերությունները Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Հաջորդ օրը, ապրիլի 24-ին, բռնկվեց ռուս-Թուրքական պատերազմը։ Քողարկելով իր քաղաքական նկրտումները՝ Ռուսաստանը հայտարարեց, որ այդ պատերազմում իր հետապնդած գլխավոր նպատակը Թուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ճնշված ժողովուրդների ազատագրումն է։ Այդ հայտարարությունը ոտքի հանեց ողջ արևելահայությանը։ Հայկական թերթերը մեկը մյուսի հետևից սկսեցին տպագրել հոդվածներ, որոնցում մոտալուտ էր համարվում Ռուսաստանի միջոցով Արևմտյան Հայաստանի ազատագրումը։

Ոգևորված այդ հայտարարությամբ՝ արևելահայերը, արևմտահայերը, Կ. Պոլսի պատրիարքարանը, ազատագրական շարժման բոլոր գործիչները նպատակադրված օգնում էին ռուսական զորքերի առաջխաղացմանը, միաժամանակ հանդես բերելով մեծ զգուշություն՝ Թուրքական իշխանությունների հետ ուղղակի առճակատումից խուսափելու համար։

Իսկ ռուսական թերթերը («Московские ведомости», «Петербургские ведомости», «Православное обозрение») *հայերին հորդորում էին հանդես գալու ինքնավարության պահանջով։*

Ռազմաճակատներում ռուսական զորքերի ձեռք բերած առաջին իսկ հաջողությունները խոր տագնապ էին առաջացրել եվրոպական տերություն-

ների և առաջին հերթին Անգլիայի քաղաքական շրջաններում։ Ռուսաստանի առաջխաղացման դեմն առնելու նպատակով, մայիսին Անգլիան Ավստրո-Հունգարիային առաջարկեց հակառուսական դաշինք կնքել։ Վերջինս, վախենալով, որ դա կարող է հանգեցնել Ռուսաստանի հետ անխուսափելի առճակատման, հրաժարվեց։ Նրա չեզոքության վարձը եղավ Բոսնիայի և Հերցեգովինայի օկուպացիան[1]։

Անգլիան փորձեց Ռուսաստանին վախեցնել պատերազմով։ 1877 թ. մայիսի 6-ին Անգլիայի արտգործնախարար լորդ Դերբին նոտա հանձնեց Լոնդոնում Ռուսաստանի դեսպան Պ. Շուվալովին։ Անգլիան զգուշացնում էր Ռուսաստանին, որ թույլ չի տա նրան շրջափակման ենթարկել Սուեզի ջրանցքը, գրավել (թեկուզ և ժամանակավորապես) Կ. Պոլիսը, փոխել սևծովյան նեղուցների կարգավիճակը։

Անգլիայի կառավարությունը շատ նրբորեն ռուսական կառավարությանը «գցեց» զաղտնի տեղեկություններ՝ Անգլիայի ռազմական պատրաստականությունների մասին։ Անգլիացի պատմաբան Սեթոն-Ուաթսընը վկայում է, որ լորդ Դերբիի կինը՝ լեդի Դերբին, Շուվալովի հետ լինելով «բարեկամական» հարաբերությունների մեջ, Արևելյան ճգնաժամի հենց սկզբից ռուսական դեսպանին տեղեկացնում էր այն ամենի մասին, ինչ տեղի էր ունենում անգլիական կաբինետում[2]։

Հավատալով այդ տեղեկություններին՝ Պ. Շուվալովը Ալեքսանդր II-ին խորհուրդ էր տալիս հաշտվողական դիրք գրավել Անգլիայի նկատմամբ՝ պատերազմից խուսափելու համար։ Կայսրն ընդառաջ գնաց։ Անգլո-ռուսական առճակատումը կանխվեց՝ Պետերբուրգի կողմից արված հանգստացուցիչ հավաստիացումներով։

Պարզ է, որ լեդի Դերբիի հաղորդած «գաղտնի» տեղեկությունները լորդ Դերբիի հանձնարարությամբ էին կատարվում և նպատակ էին հետապնդում ոչ միայն կանխելու անգլո-ռուսական պատերազմը, որին Անգլիան պատրաստ չէր, այլև Ռուսաստանին ստիպելու հաշվի նստել Անգլիայի շահերի հետ։

Անգլիան շատ խիստ վախեցած էր ռուսական զորքերի առաջխաղացումից։ Այդ տագնապի գրգռապատճառներն ամբողջությամբ առնչվում էին Հայկական հարցին և արտահայտված են Կ. Պոլսում Անգլիայի նոր նշանակված դեսպան Հենրի Լեյարդի՝ կառավարությանը գրած 1877 թ. մայիսի 30-ի զեկուցագրում։

«Եթե Ռուսաստանը փորձի այժմ անեքսիայի ենթարկել եվրոպական Թուրքիայի ցանկացած մարզը,—գրում էր Լեյարդը,—ապա դրանով իսկ կշոշափվեն եվրոպական երկրների շահերը, որոնք էլ կխանգարեն Ռուսաստանին իրագործելու իր նպատակները... ինչ վերաբերում է Ռուսաստանի կողմից Փոքր Ասիայում տարածքներ գրավելուն, այստեղ հարցը այլ է. այստեղ կշոշափվեն բացառապես Անգլիայի շահերը։ Հայաստանի անեքսիան Ռուսաստանի կողմից եվրոպական բոլոր երկրների համար, հավանաբար, շատ բան չի նշանակի։ Սակայն Անգլիան պետք է հաշվի առնի Ռուսաստանի կողմից այդ կարևոր մարզի անեքսիայի ազդեցությունը՝ Հնդկաստանում բրիտանական տիրապետության տեսանկյունից»[3]։

Այստեղ ասված է ամեն ինչ՝ Հայկական հարցում Անգլիայի վարած քաղաքականության բուն իմաստը հասկանալու համար։

Ստանալով Լեյարդի հաղորդագրությունը՝ լորդ Դերբին իր մոտ հրավիրեց Պ. Շուվալովին և հայտարարեց, որ եթե ռուսական զորքերը գրավեն Կ. Պոլիսը, Ռուսաստանը չի կարող հույս դնել Անգլիայի չեզոքության վրա։

---

[1] Lord Kinross, The Ottoman Centuries. The Rise and Fall of the Turkish Empire, London, 1977, p. 519.

[2] R. W. Seton-Watson, Disraeli, Gladston and the Eastern Question, London, 1935, p. 250.

[3] Public Record Office (London), FO 608/77, p. 315.

Այս նշանակում էր, որ Անգլիան հրաժարվում էր ռուս-թուրքական պատերազմն սկսվելուց ընդամենը 24 օր առաջ լորդ Դերբիի և Պ. Շուվալովի կողմից ստորագրած «Լոնդոնյան արձանագրությունից», որով կողմերը «խորհուրդ էին տալիս» Թուրքիային որոշ «զիջումներ անել» Ռուսաստանին՝ ռուս-թուրքական հարաբերությունները մեղմելու համար։ Այդ հարաբերությունները սրվել էին Բալկանյան հարցի վերաբերյալ Կ. Պոլսում 1876 թ. մարտին տեղի ունեցած կոնֆերանսի ձախողման հետևանքով։

Հուլիսի 28-ին Անգլիայի կառավարությունը Հենրի Լեյարդին հանձնարարեց սուլթանին հայտնել, որ եթե Ռուսաստանը մպառնա Կ. Պոլսին, իսկ սուլթանը դիմի Անգլիային, նա պատրաստ է իր նավատորմն ուղարկել Կ. Պոլիս[4]։

Բիքոնսֆիլդի կառավարությունը, պատրաստ չլինելով պատերազմի, այս անգամ ցուցադրաբար վճռական տրամադրվածություն էր դրսևորում, սպառնալով նույնիսկ գրավել Արևելյան Հայաստանը և Թիֆլիսը։ Երբ այս պլանների մասին տեղյակ է պահվում Լեյարդը, նա խորհուրդ է տալիս իր կառավարությանը, որ երբ անհրաժեշտություն ծագի Անգլիայի ռազմական նավատորմը Կ. Պոլիս ուղարկելու, այդ դեպքում հստակորեն պետք է ընդգծվի, որ անգլիական նավատորմը Կ. Պոլիս է գալիս Թուրքիայի շահերից ելնելով և նրա կառավարության համաձայնությամբ։ Լեյարդն այն կարծիքին էր, որ անհրաժեշտ էր դրանում նախ և առաջ համոզել սուլթանին։

Իսկ Եթե այդ քայլը կատարվեր առանց սուլթանի համաձայնության, ապա դա ոչ միայն Անգլիայի դեմ՝ որպես ագրեսորի կհաներ ամբողջ Եվրոպային, այլև Թուրքիային կմղեր համաձայնության Ռուսաստանի հետ, ինչը ձեռնտու չէր Անգլիային։

Ստեղծված պայմաններում բացառվում էր Թուրքիայի համաձայնությունը Ռուսաստանի հետ։ Այլ բան էր, որ Թուրքիան կարող էր օգտագործել այդ հաղթաթուղթը Անգլիայից զիջումներ ստանալու համար։ Սակայն սուլթանին այժմ անհանգստացնում էր Ռուսաստանի նկատմամբ անսքող համակրությունը դրսևորած արևմտահայությունը։ Այդ պատճառով էլ նա բացահայտ ահաբեկչության դիմեց։ Դա սթափեցրեց հայ գործիչներին, նույնիսկ պառլամենտի այն հայ երեսփոխաններին, որոնք դեռևս երեկ պառլամենտի ամբիոնից հավատարմության երդում էին տալիս սուլթանին։ Տեղի էր ունենում արևմտահայության ազգային գիտակցության համընդհանուր արթնացում։

Իր դիրքորոշումը փոխեց նաև Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը։ Մինչ այդ նա, վախենալով հայ-թուրքական բաց առճակատումից, շատ զգուշավոր քաղաքականություն էր վարում, որի հետևանքով հայերի անվստահությանն էր արժանացել, իսկ Աբդուլ Համիդից օսմանյան առաջին կարգի «Օսմանիե» շքանշան էր վաստակել։ Պատրիարքն հասկացել էր, որ օսմանյան տիրապետության տակ հայ ժողովուրդն այլևս փրկություն չունի։

Ներսես պատրիարքը շարունակում էր հույսեր փայփայել, որ Եվրոպան կօգնի իր ժողովրդին թոթափելու սուլթանի լուծը։ Այդ նկրտումներով նա դիմեց Լեյարդին, հայտարարելով, որ եթե եվրոպական տերությունները և հատկապես Անգլիան չմիջամտեն հայերի պահանջները բավարարելու գործին, ապա նրանք ստիպված կլինեն դիմել Ռուսաստանին։ Տեղյակ պահելով, որ բազմաթիվ հայ ընտանիքներ ցանկություն են հայտնել արտագաղթել Ռուսաստանի սահմանները, պատրիարքը դեսպանին խնդրում էր պաշտպանել հայերի խնդրանքը՝ ինքնավար պետություն ստեղծելու գործում[5]։

---

[4] R. S. Salahi, The Ottoman Armenians, London, 1987, p. 31.

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 45—47, Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 56—58։ Esat Uras, The Armenians in History and the Armenian Question, London, 1988, p. 440—441.

Հենրի Լեյարդը, որը շատ կարճ ժամանակում շահել էր Աբդուլ Համիդի վստահությունը, 1877 թ. դեկտեմբերի 4-ին Դերբիին հղած դաղտնի զեկուցագրում (որը Լոնդոն էր հասել դեկտեմբերի 13-ին) կրկին նշում էր, որ եթե Ռուսաստանը ձեռք բերի Հայաստանը կամ նրա մի մասը, դա «վտանգ կսպառնա Արևելքում մեր շահերին և ազդեցությանը», որ անհրաժեշտ է առանց ուշացնելու այդ վտանգի դեմն առնել։ Հակառակ դեպքում, շարունակում է Լեյարդը, Ռուսաստանի կողմից Հայաստանի կամ նրա մի մասի անեքսիան խիստ բացասական ազդեցություն կունենա Կենտրոնական Ասիայի մահմեդական բնակչության վրա, կնպաստի Ռուսաստանի հետագա հաղթանակներին՝ Պարսկաստանում և Փոքր Ասիայում, «կսպառնա Հնդկաստանի հետ Անգլիայի կոմունիկացիաներին և կվնասի բրիտանական առևտրին»[6]։

Անգլիային անհանգստացնում էր ոչ միայն Ռուսաստանի դիրքերի հնարավոր ուժեղացումը, այլև Ֆրանսիայի ոտքի կանգնելը, որը 1870 թ. ֆրանս-պրուսական պատերազմում պարտություն կրելուց հետո ուշքի էր եկել և նպատակ չուներ իր դիրքերը զիջելու Անգլիային։

Մինչ անգլիական դիվանագիտական խորհանոցներում աշխուժորեն քննարկվում էին Ռուսաստանի առաջխաղացմանը հակազդիչ դործողություններ ձեռնարկելու պլանները, ռուսական զորքերը գրավեցին Կարսը, Արդահանը, Բայազետը, Ալաշկերտը և այլ վայրեր։ Այդ վայրերի դրավումը, որտեղ կենտրոնացած էին թուրքական բանակի գլխավոր ուժերը, կանխորոշեց Թուրքիայի պարտությունը։ Ռուսական զորքերի հաջողություններոր մեծ մասամբ պայմանավորված էին նրանով, որ Արևմտյան Հայաստանի գրավված վայրերի հայ բնակչությունը, ինչպես նաև արևելահայությունը, մեծ օգնություն էին կազմակերպում ռուսական զորքերին, որոնց զորախմբերը Կովկասյան ճակատում ղեկավարում էին հայազգի գեներալներ Իվան (Հովհաննես) Լազարևը, Լորիս-Մելիքովը, Տեր-Ղուկասովը, Բ. Շելկովնիկովը։

Ռուսական զորքերին հայերն ամենուրեք դիմավորում էին մեծ խանդավառությամբ։ Առավել մեծ էր նրանց ոգևորությունը, երբ հայ գեներալներին էին դիմավորում։ Ժամանակակիցը նկարագրել է, օրինակ, թե ինչպես են հայերը դիմավորել Լազարևին Կարինում։ Մտնելով քաղաք, Լազարևը «Հակառակ զինվորական սովորության, բարձրացնում էր յուր դրխարկը և նույնչափ խոնարհությամբ ողջունելով՝ բարձրաձայն ասում էր. «Բարև ձեզ, հայեր»։ Ժողովուրդը նորից խոնարհեցնում էր դլուխը «Կեցցես Լազարոֆ, կեցցես» աղաղակելով... «Կեցցես հայ ազգի քաջ զորապետ Լազարոֆ—մեր ազդի պարծանք...», իսկ հավաքված հայերի դեմքերին «սահում էին խոշոր-խոշոր կաթիլ արտասուքներ...»[7]։

Նույն ջերմությամբ են դիմավորել Լազարևին, երբ նա գրավել է Կարսը։ Որոշ ժամանակ անց նա Կովկասյան ռուսական բանակի առանձին գործող երկրորդ կորպուսի հրամանատարն էր։

Մինչ այդ, նշված կորպուսի հրամանատարն էր Լորիս-Մելիքովը, որի գլխավորությամբ ռուսական զորքերը գրավել էին Արդահանը։ Իսկ գեներալմայոր Ա. Տեր-Ղուկասովի գլխավորած Երևանյան ջոկատը, հայ ամխարհաորայիններ օգնությամբ, գրավել էր Բայազետը, Ղարաքիլիսան, Դիադինը, Ալաշկերտը, Կաղզվանը և այլ վայրեր։ Նուխեցի հայ գեներալ Շելկովնիկովի գլխավորած զորամասերը գործում էին Բաթումի և Սուխումի ուղղությամբ։ Էրզրումը գրավելուց հետո Շելկովնիկովը նշանակվեց Էրզրումի զինվորական նահանգապետ։

Ժամանակակիցները շատ բարձր են գնահատել հայ գեներալների ռազմական տաղանդն ու քաջությունը, նրանց մեծ ավանդը ռուս-թուրքական պատերազմում տարած հաղթանակում[8]։

---

[6] British documents on Ottoman Armenians, vol. I (1856—1889), Ankara, 1982, p. 135—140.

[7] Փորձ, 1879, № 9, Տփխիս, էջ 201։

[8] Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1897, с. 445—490.

1877—78 թթ. ձմեռային կամպանիայի ժամանակ ռուսական զորքերը մտան Բուլղարիա, ապա գրավեցին Ադրիանուպոլիսը և ընդհուպ մոտեցան Կ. Պոլսին։

Արդուլ Համիդը գլուխը կորցրել էր։

Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Լեյարդը 1877 թ. դեկտեմբերի 13-ին Դերբիին հղած հաղորդագրությունում գրել է. «Այս առավոտ սուլթանը բացեց օսմանյան պառլամենտի երկրորդ նիստը... դահակալական ճառն ընթերցեց նորին մեծության քարտուղար Սեիդ փաշան... նորին մեծությունը հոգնած տեսք ուներ և ճնշված էր։ Նա շատ հասարակ էր հագնված...»[9]։

Փետրվարի 8-ին, Էրզրումի գրավումից հետո, Թուրքիայի լիակատար պարտությունը դարձավ անխուսափելի։ Բոլորին թվում էր, որ հասել է մարդկությանը մեծ չարիքներ պատճառած Օսմանյան կայսրության փլուզման երանելի ժամը։ Արդուլ Համիդը պատրաստվում էր փախչել Անգլիա։ Նրան փրկեց Դիզրաելին (Բիքոնսֆիլդը), որն ստատնաց ռուսական կառավարությանը, որ Կ. Պոլսի նույնիսկ ժամանակավոր գրավումը «մեծապես կվտանգի» անգլո-ռուսական հարաբերությունները»[10]։

Ռուսական զորքերի մոտենալը Կ. Պոլսին, դրում է Թուրքագետ լորդ Կինրոսը, «մեծ տագնապ առաջացրեց քաղաքում և խոր մտահոգություն Լոնդոնում։ Թուրքերը... դիմեցին տերություններին, խնդրելով միջամտություն... Աբդուլ Համիդը հեռագրեց անձամբ Վիկտորիա թագուհուն, խնդրելով նրա միջնորդությունը ռուսական կայսեր առջև՝ հաշտության համար»[11]։

Իր սպառնալիքներին առարկայական տեսք տալու միտումով, Անգլիայի կառավարությունը փետրվարի 12-ին ծովակալ Հորնբիին հրաման տվեց ռազմական նավատորմը շարժել դեպի Թուրքական ջրերը։ Երեք օր անց, անգլիական ռազմական նավերը խարիսխ գցեցին Իշխանաց կղզիների մոտ, Կ. Պոլսից նավարկության մեկ ժամվա հեռավորության վրա։ Այդ նպատակի համար պառլամենտը 6 միլիոն ֆունտ ստեռլինգ էր հատկացրել[12]։

Ռուսական զորքերը չմտան Կ. Պոլիս։ Թուրքիան զինադադար խնդրեց։ Զինադադարի համաձայնագիրն ստորագրվեց 1878 թ. հունվարի 19/31-ին, Ադրիանուպոլսում։ Բիքոնսֆիլդն այն գնահատեց որպես «կատակերգություն», քանի որ ռուսական զորքերը շարունակում էին գրավել նոր տարածքներ[13]։ Հաշտության բանակցություններն ավարտվեցին 1878 թ. փետրվարի 19 (մարտի 3)-ին, Կ. Պոլսի մատույցներում գտնվող Սան-Ստեֆանոյում, որն ընդամենը 9 օր առաջ էին գրավել ռուսները։

Ռուսական կայսրը բանակցությունները վարելու պատիվը տվեց Թուրքիայում Ռուսաստանի նախկին դեսպան, աչքի ընկած դիվանագետ Ն. Իգնատևին, որը ժամանակին կարողացել էր շահել հայերի համակրանքը։

Եվրոպական տերությունները (հատկապես Անգլիան) խուճապի. իսկ՝ Թուրքական կառավարությունը սարսափի մեջ էին։ Սան-Ստեֆանոյում բանակցությունները սկսվելուց մեկ օր առաջ Թուրքական պատվիրակները հանդիպում ունեցան ռուսական Բալկանյան բանակի գլխավոր հրամանատար, մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի հետ։ Նրանք խնդրելով պնդում էին, որպեսզի բանակցությունների ընթացքում չքննարկվեր Հայկական հարցը։ Մեծ իշխանը պատասխանել է, որ «կայսրից հատուկ հրահանգ է ստացվել», և ինքը ոչինչ անել չի կարող[14]։

Ստորագրվեց նախնական հաշտության պայմանագիր, որի 16-րդ հոդվածով Բարձր Դուռը պարտավորվում էր «անհապաղ կենսագործել հայա-

---

[9] British documents..., vol. I, p. 147.
[10] R. S. Salahi, նշվ. աշխ., էջ 31։
[11] Lord Kinross, նշվ. աշխ., էջ 522, 523։
[12] Esat Uras, նշվ. աշխ., էջ 457։
[13] Lord Kinross, նշվ. աշխ., էջ 523։
[14] British documents..., vol. I, p. XV.

բնակ մարզերի (Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքիրի—Գ. Գ.) տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»[15]։

Բարենորոգումները պետք է իրագործվեին նախքան «Ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված Հայաստանի» տարածքներից։ Այս նշանակում էր, որ Ռուսաստանը իր հովանավորության տակ էր վերցնում Արևմտյան Հայաստանը։ Դա ավելին էր, քան ազդեցության գոտի ձեռք բերելը, բայց չէր նշանակում, թե Արևմտյան Հայաստանին ինքնավարություն էր տրվում։

Սան-Ստեֆանոյի պայմանագիրն ստորագրելու նախօրյակին Հայոց սրգգային ժողովի կողմից լիազորված պատվիրակությունը, որն այնտեղ էր գտնվում սուլթանի գիտությամբ, հանդիպում ունեցավ Իգնատևի հետ։ Զրույցի ժամանակ Իգնատևը նրանց հայտնել էր, որ Հայաստանի վերաբերյալ նախատեսվող հոդվածում տեղ էր գտնելու հետևյալ ձևակերպումը. «...Օսմանյան սուլթանը և Ռուսաստանի կայսրը որոշելու են երաշխավորել հայերով բնակեցված մարզերի լրիվ անկախությունը...» և ներկայացնելու են նրանց վարչական կառավարման օրենքի անհրաժեշտ փոփոխություններ[16]։

Սակայն այս առաջարկը, որի իրագործումը կկանխորոշեր Արևմտյան Հայաստանի ճակատագիրը, խիստ դիմադրության էր հանդիպել թուրքական պատվիրակության կողմից։ Վերջինս հայտարարել էր, որ սուլթանը անհաղորդ է նման հարցադրմանը, և պատվիրակությունը լիազորություններ չունի այն քննարկելու։

Էսաթ Ուրասը գրում է, թե թուրքական պատվիրակներն այդ կապակցությամբ դիմել են Մարաշից թուրքական պառլամենտի երեսփոխան Գևորգ վարդապետին, խնդրելով պարզաբանելու հայերի դիրքորոշումը։ Նա, իբր, պատասխանել է, թե «Հայերը ռուսների ձեռքին խաղալիք չեն։ Ռուսաստանը նույն բանը նախկինում ևս փորձել է, բայց հայերը գոհ են այն կառավարությունից, որի իշխանության տակ նրանք ապրել են հինգ հարյուր տարուց ի վեր»[17]։

Դժվար է հավատալ թուրք պատմաբանի այս պնդմանը, քանի որ Սան-Ստեֆանոյի պայմանագրի ստորագրումից հետո նույնիսկ Կ. Պոլսում հրատարակվող հայկական թերթերը համարձակորեն գրում էին Արևմտյան Հայաստանի մոտալուտ ազատագրման մասին։

Սան-Ստեֆանոյի բանակցությունների ժամանակ սուլթանի գիտությամբ այնտեղ մեկնած պատրիարք Ներսեսը հանդիպում է ունեցել մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի հետ։ Վերջինիս հետ տեսակցություն է ունեցել նաև Վանի հոգևոր առաջնորդ Մկրտիչ Խրիմյանի գլխավորած պատվիրակությունը։ Նրանք խնդրել են մեծ իշխանին՝ Բեռլինի վեհաժողովում հարց բարձրացնելու Անատոլիայի արևելյան մարզերում «Հայկական անկախ պետություն» ստեղծելու մասին։ Սալահին նշում է, որ մեծ իշխանը չի խոստացել պաշտպանել այդ գաղափարը[18]։ Այս տեղեկությունը հավաստի է։ Անգլիան իր ոտքը խաղացել էր։ Ռուսաստանը նահանջեց հայերին տված իր խոստումից։

Սակայն անբացատրելի է մնում, թե սուլթանն ինչ նպատակով էր թույլ տվել պատրիարք Ներսեսին և Խրիմյանին՝ մեկնելու Սան-Ստեֆանո։ Կարելի է թերևս ենթադրել, որ սուլթանն այդ քայլով նպատակ է ունեցել իր համար պարզելու, թե հայերը վերջապես ինչի են ձգտում, քանի որ պատրիար-

---

15 «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երևան, 1972, էջ 92։

16 Esat Uras, նշվ. աշխ., էջ 456; Christopher J. Walker, Armenia. The survival of a Nation. London, 1980, p. 111.

17 Esat Uras, նշվ. աշխ., էջ 456,

18 R. S. Salahi, նշվ. աշխ., էջ 47։

քը մշտապես հավաստիացնում էր նրան, որ հայերը անջատողական ձգտումներ չունեն։

Շուտով սուլթանը համոզվեց, որ պատրիարքը կամ դիվանագիտություն էր խաղում, կամ իրոք, չգիտեր, թե ինչի են ձգտում արևմտահայերը։

Անդրադառնալով Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածին՝ էսաթ Ուրասը նշում է, որ հայերը վաղուց ի վեր մեծ սպասելիքներ ունեին, որ Ռուսաստանի օգնությամբ կհասնեն իրենց ինքնավարությանը։ Կովկասյան հայերի կողմից ռուսական բանակներին ցույց տված օգնությունը մեծացնում էր այդ հույսը։ Հայերի հիշողության մեջ հատկապես թարմ էին մնացել Ներսես Աշտարակեցու ժամանակները, երբ 1826—1828 թթ. հայերը ծառայում էին ռուսական բանակում։ Բայց «լրիվ անկախության փոխարեն նրանք ստացան միայն այս հոդվածը»[19]։

Լայն առումով հայանպաստ էր նաև այդ պայմանագրի 17-րդ հոդվածը, որով Բ. Դուռը պարտավորվել էր լիակատար և անվերապահ ներում շնորհել ապստամբական շարժումներին մասնակցած բոլոր թուրքահպատակներին ու տարագիրներին և անհապաղ ազատ արձակել բանտարկվածներին։ Իսկ 27-րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր չհալածել և թույլ չտալ հալածելու այն թուրքահպատակներին, որոնք պատերազմի ժամանակ կապեր էին ունեցել ռուսական բանակի հետ, ինչպես նաև նրանց, ովքեր կցանկանային իրենց ընտանիքներով հեռանալ ռուսական զորքերի հետ, որոնք Ասիական Թուրքիայից դուրս պետք է բերվեին վերջնական հաշտությունը կնքելուց հետո վեց ամսվա ընթացքում (հոդված 25)։

Սան-Ստեֆանոյի պայմանագիրը միջազգային առաջին պայմանագիրն էր, որտեղ Արևմտյան Հայաստանը դիտվում էր որպես միջազգային դիվանագիտության օբյեկտ և Թուրքիան ճանաչում էր այդ փաստը։ Ինքնին դա մեծ նշանակություն ունեցող երևույթ էր և որևորություն էր առաջ բերել հայերի մեջ, չնայած նրանց հոգիներում թախիծ կար, որ իրենց երկիրը ևս շարժանացավ Բուլղարիայի բախտին, որին անկախություն էր շնորհվել՝ քրիստոնեական կառավարությամբ և զեմստվոյական զորքով։ Բայց փաստը մնում էր փաստ, որ Հայաստանը ճանաչվում էր որպես ինքնուրույն միավոր, որտեղ նախատեսվում էր անցկացնել բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը։

Հայոց պատրիարքը խնդրել էր ռուսական կառավարությանը՝ զորքերը դուրս չբերել գրավված տարածքներից մինչև այնտեղ բարենորոգումներ անցկացնելը։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի 19-րդ հոդվածով Թուրքիան Ռուսաստանին էր զիջում Կարսը, Սարիղամիշը, Արդահանը, Բաթումը, Բայազետը, Ալաշկերտի հովիտը և հարակից տարածքները, մինչև Սողանլու։

Ռուսաստանի համար առաջնակարգ նշանակություն ուներ 24-րդ հոդվածը, որով Թուրքիան հանձն էր առնում ինչպես պատերազմի, նույնպես և խաղաղ ժամանակ Բոսֆորը և Դարդանելը բաց պահել ռուսական նավահանգիստներից եկող և դեպի դրանք ուղղվող չեզոք երկրների առևտրական նավերի համար։ Բ. Դուռը պարտավորվում էր նաև այլևս չշրջափակել Սև և Ազովի ծովերի նավահանգիստները։ Այս հոդվածը հատկապես ուժեղ գրգիռ էր առաջացրել Անգլիայում, որը վախ էր զգում, թե Սև ծովը կվերածվեր ռուսական լճի՝ դրանից բխող բոլոր հետևանքներով։

Մարտի 6-ին Ավստրո-Հունգարիան և ապա Անգլիան, նախորոք շրջափելով եվրոպական մյուս տերությունների տրամագրությունները և ստանալով նրանց համաձայնությունը, պահանջեցին ռուս-թուրքական հաշտության նախնական պայմանագիրը քննարկել միջազգային վեհաժողովում, պատճառաբանելով, որ այն շրջափում էր համաեվրոպական շահերը և հակասում մինչ այդ ստորագրված միջազգային պայմանագրերին։ Ռուսաս-

[19] Esat Uras, նշվ. աշխ., էջ 448։

տանը չէր կարող դիմագրել։ Նրան թույլ չտրվեց գրել «ազատ շարադրություն»։ Նրան պարտադրվեց «թելադրություն»։

Չնայած դրան, Ալեքսանդր II-ը դեռևս հույս ուներ, որ ռուսական զորքերի կողմից գրավված տարածքներն ամբողջությամբ կմնային Ռուսաստանին։ Իսկ արևմտահայերի ոգևորությունը շատ մեծ էր և սպասելիքներն այնքան իրական էին թվում, որ պատրիարք Ներսեսի գլխավորությամբ ստեղծվեց մի հանձնախումբ, որը շուտով հրապարակ հանեց «Օսմանյան Հայաստանի կազմակերպական կանոնագրի ծրագիր»[20]։

1878 թ. մարտի կեսերին այդ ծրագիրը և Ներսես Վարժապետյանի ու ինը եպիսկոպոսների ստորագրությամբ կազմած աղերսագիրը, որով ռուսական կայսեր «զորավոր պաշտպանությունն» էր հայցվում, արքեպիսկոպոս Խորեն Նար-Պեյի գլխավորած պատվիրակությունը տարավ Պետերբուրգ Ալեքսանդր II-ին հանձնելու համար։ Այդ առաքելությունն հանձնարարվեց Խորեն Նար-Պեյին։ Արևմտահայ քաղաքական շրջաններում նա մեծ հեղինակություն չուներ, բայց վայելում էր պատրիարքի վստահությունը, տիրապետում էր մի քանի լեզուների, այդ թվում ռուսերենին և դիվանագետի ձիրք ուներ։

Հայտնի չէ, պատրիարքի հանձնարարությամբ, թե իր նախաձեռնությամբ, Նար-Պեյը խնդրել էր Արևմտյան Հայաստանի նահանգապետ Նշանուկեն, Լորիս-Մելիքովին[21]։

Ռուսական արքունիքին ներկայացրած ծրագրում ասվում էր. «Ա. Հայաստանը պիտի ունենա ընդհանուր կառավարիչ, անպատճառ հայ-լուսավորչական, որին պիտի ընտրե սուլթանը՝ ռուսական ցարի հաճությամբ։ Կառավարիչը պիտի կոչվի մարզպան և վալի, պիտի ունենա «մյուշիրի» աստիճան։

Բ. Հայաստանի նահանգապետներն և գավառապետերը նույնպես լուսավորչական պիտի լինեն, բայց սրանք պիտի ընտրվեն Հայաստանի եռեսփոխանական ժողովից և վավերացվեն Բ. Դռնից։

Գ. Երկրի կարգապահությունը հայոց ձեռք պիտի լինի. ոստիկանությունը հայերից պիտի կազմվի։

Դ. Դատարանները շերիաթից ազատ պիտի լինեն և պիտի դտնվեն հայ դատավորների նախագահության տակ։

Ե. Քուրդ արտոնյալների (չորրաջը, ղերեբեյի) արտոնությունների ջնջումը։

Զ. Տուրքերի նոր և արդար բաշխում։

Է. Վաքըֆի (մահմեդական հոգևորական կալվածք) բարեկարգություն. առհասարակ կալվածական օրենքի վերաքննություն։

Ը. Թրքերի զինաթափումը Հայաստանում։

Թ. Հայաստանի համար վարչական նոր կանոնադրություն, որը պիտի վավերացնե սուլթանը՝ Ռուսաստանի հավանությամբ։

Եվ վերջապես,

Ժ. Զեյթունի հնդադարյան ինքնավարության երաշխավորումը»[22]։

Աբդուլ Համիդի կողմից հավանության արժանացած, իսկ Գրիգոր Արծյունու կողմից «մեռելածին» անվանված այս ծրագրում[23], հայերը չէին համարձակվում ուղղակի դնել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը։ Այն հանգեցվում էր Արևմտյան Հայաստանի համար ռուսական կայսեր հաճությամբ սուլթանի կողմից նշանակված «ընդհանուր հայ-լուսավոր-

20 Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 82—85։

21 Esat Uras, նշվ. աշխ., էջ 449։

22 Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 328—335.

23 Մշակ, 1879, № 75 (Թուրքաց հայերի տնտեսական դրությունը)։

չական կառավարիչ» ունենալուն։ Մնացած բաղադրյալները պայմանավորված էին այս պահանջով։

Այդ ծրագրի խեղճությունը բացատրվում էր արևմտահայերի հոգեբանական գործոնով։ Դարեր շարունակ ապրելով Օսմանյան կայսրությունում՝ նրանց համար դեռևս դժվարամարս էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարը։ XIX դ. երկրորդ կեսին, երբ առաջին անգամ էր բարձրացվում այդ հարցը, ընդգծվում էր Թուրքիայի գերիշխանության տակ ինքնավարություն ստանալու պահանջը։ Սա սուլթանի պալատի փշրանքներից սնվողների մտայնությունն էր։ Նրանց թիվը քիչ չէր արևմտահայ մտավորականության մեջ, որոնք կարծում էին, թե առանց ապստամբության, սուլթանի ողորմածությամբ հայերը կարող են ձեռք բերել քաղաքական և քաղաքացիական ազատություններ։ Նրանք իրենց հույսը կապում էին Միդհատի սահմանադրության հետ, որը «հավասարություն» էր խոստանում կայսրության բոլոր ազգերի համար։

Նույն խեղճությամբ էր տառապում նաև չգիտես ում կողմից յիագորված, Նուբար փաշայի մշակած ծրագիրը, որտեղ ընդհանրապես ակնարկ չկար Արևմտյան Հայաստանի ինքնավարության մասին։ Այդ ծրագրի գլխավոր պահանջը հանդում էր Արևմտյան Հայաստանում եվրոպական տերությունների կողմից հովանավորվող հայ նահանգապետի նշանակմանը։ Նուբար փաշան ակնկալում էր, որ հենց ինքը պետք է լիներ այդ նահանգապետը։ Մինչդեռ պատրիարք Ներսեսը նույնիսկ լսել չէր ուզում Նուբար փաշայի և նրա ծրագրի մասին։

Եթե նույնիսկ ընդունվեր և կիրառվեր այս ծրագրերից որևէ մեկը, Արևմտյան Հայաստանը դարձյալ մնալու էր Թուրքիայի տիրապետության տակ, այսինքն, Հայկական հարցը արմատապես չէր լուծվելու։

Այս երկու իրար հետ չհամաձայնեցրած ծրագրերը տառապում էին անհետևողականությամբ և ընդունակ չէին վճռական պայքարի մղելու ազատատենչ ժողովրդին։ «Տնավարի» կազմված այդ ծրագրերը, հենց դրանց երկուսը լինելու փաստը, խորը տարաձայնություններ հարուցեցին հայ հասարակության մեջ, պառակտելով ու ջլատելով նրանց ուժերը։ Ե՛վ արևմտահայերի, և՛ արևելահայերի սպասումներն այնքան մեծ էին, որ նրանց չէին բավարարում առաջադրված ծրագրերի «համեստությունը» և դրանց իրականացման երերուն մեխանիզմները։

Այդ ծրագրերը լրջությամբ չընդունեց հասցեատերերից և ոչ մեկը, չնայած նրանք արտաքուստ «բարյացակամությամբ» ծանոթացան դրանց հետ։

Պատրիարք Ներսեսի կազմած ծրագիրը Նար-Պեյը հանձնեց Ռուսաստանի վարչապետ և արտգործնախարար Ա. Գորչակովին։ Թրծված դիվանագետը լրջություն չտեսավ նրանում, սակայն համոզեց Ալեքսանդր II-ին տեսակցություն ունենալ Նար-Պեյի հետ։

Կայսրը, իր բարեմաղթությունները հաղորդելով հայ ազգին, խոստում չտվեց այդ ծրագիրը ներկայացնել Բեռլինի վեհաժողովի քննարկմանը։ Նար-Պեյը չկարողացավ համոզել ռուսական կայսրին պաշտպանելու ներկայացված ծրագիրը։ Ռուսական արքունիքի սառնությունը բացատրվում էր ոչ թե Նար-Պեյի անկարողությամբ, այլ նրանով, թե ինչ հետևանքներ կունենար այդ ծրագիրը արևելահայերի համար։ Բացի այդ, Էջմիածնի կաթողիկոս Գևորգ 4-րդը, որին գրավոր դիմել էր Ներսես պատրիարքը և խնդրել, որպեսզի նա ևս միջնորդեր Ալեքսանդր II-ի առջև՝ ընդառաջ գնալու արևմտահայերի պահանջներին, մերժեց պատրիարքի խնդրանքը։ Գիտենալով ռուսական արքունիքի տրամադրվածությունը Հայկական հարցում՝ նա դրսևորեց իր բացասական վերաբերմունքը Նար-Պեյի առաքելության նկատմամբ։ Կաթողիկոսը նաև վիրավորված էր զգում, որ ինքը՝ Կ. Պոլսի նախկին պատրիարքը (1858—1860), չէր ներգրավվել ծրագրի կազմմանը և նախապես տեղյակ չէր Նար-Պեյի առաքելությանը։ Հայ գործիչներից շատերի մեջ միշտ էլ սեփական պատվախնդրությունը բարձր է դասվել ազգի շահերից։ Քիչ դեր չխաղաց նաև այն փաստը, որ Խրիմյան Հայրիկի գլխավորած պատվի-

ռակությունը նույն առաքելությամբ մեկնել էր Եվրոպա և նրանից էր հայ-ության օգնություն, մի բան, որը չէր կարող չզրդռել ռուսական արքունիքին։ Ռուսական մամուլում հայտնվեցին հոդվածներ, որոնցում դատապարտվում էր Խրիմյան Հայրիկի առաքելությունը Եվրոպա։

Անհնար է պատկերացնել, որ Աբդուլ Համիդը տեղյակ չէր Նար-Պեյի և Խրիմյան Հայրիկի բանաձևությունների։ Առավել անհիմն կլինի ենթադրել, թե նա չէր կարող արգելել մեկի մեկնումը Ռուսաստան, մյուսինը՝ Եվրոպա։ Աբդուլ Համիդը հասկանում էր, որ երկու լարերի վրա հայ գործիչների խաղը ոչ միայն զրգռելու էր եվրոպական տերությունների և Ռուսաստանին միմյանց դեմ, այլև բոլորի անվստահությունն էր առաջացնելու հայերի անկեղծության նկատմամբ։ Բացի այդ, խառնելով քարտերը, Աբդուլ Համիդը ձգտում էր ստեղծել տպավորություն, որ հայերը, դիմելով եվրոպական տերություններին, դրանով իսկ ձգտում էին հասնել Սան-Ստեֆանոյի պայմանագրի փոփոխմանը, որպեսզի իրենց բախտի տնօրինությունը չտրվեր միայն Ռուսաստանին։

Աբդուլ Համիդի հաշվարկները սխալ դուրս չեկան։ Հետևանքը եղավ այն, որ ո՛չ Ռուսաստանը և ո՛չ էլ եվրոպական որևէ տերություն չխոստացան պաշտպանել Հայ դատը Բեռլինի վեհաժողովում։ Դա Աբդուլ Համիդի խոշոր հաղթանակն էր։ Նա ճարպկորեն կարողացավ ոչ միայն օգտագործել եվրոպական տերությունների հակասությունները Հայկական հարցում, այլև անհնար դարձնել այդ հակասությունների լուծումը։

Աբդուլ Համիդը դիվանագիտական խորամանկ քայլերով աշխատում էր հատկապես խորացնել եվրոպական տերությունների և Ռուսաստանի հակասությունները Հայկական հարցում։ Լեյարդի հետ ունեցած բազմաթիվ հանդիպումների ժամանակ սուլթանը նրա ուշադրությունն էր հրավիրում հայերի ակտիվության վրա և զգուշացնում, որ եթե Անգլիան հակազդիչ քայլերի չդիմի, Ռուսաստանը կարող է հասնել իր նպատակներին։ Իսկ ռուս-թուրքական պատերազմից առաջ ռուսական դեսպանի հետ ունեցած հանդիպումների ժամանակ սուլթանը նրան կարողացել էր ներշնչել, որ հայերն իրենց հույսերը կապել են Անգլիայի հետ, և եթե նրանց հաջողվի ձեռք բերել ինքնավարություն, դա կարող է ծառայել Անգլիայի շահերին, ուրբի հանել արևելահայերին և մեծ վնաս պատճառել Ռուսաստանին։ Փաստերն առատ էին ապացուցելու համար և՛ մեկը, և՛ մյուսը։

1878 թ. մարտի 18-ին Լեյարդը հանդիպում ունեցավ Ներսես պատրիարքի հետ։ Նա անհանգստացած էր, որ հայերը ռուսների դրդմամբ ձգտում էին ինքնավարության։ Պատրիարքը, մկրտված չլինելով դիվանագիտական խաղերում, չկարողացավ նրան համոզել, որ հայերի ինքնավարության պահանջը չէր հակասում Անգլիայի շահերին։ Նույն օրը Լեյարդը տագնապալից հեռագիր ուղարկեց արտգործնախարար Է. Դերբիին՝ պատրիարքի հետ ունեցած իր զրույցի և նրա կողմից Ռուսաստան ուղարկած ծրագրի մասին։

Չնայած այդ ծրագրում Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը ուղղակի չէր դրվում, բայց Լեյարդի հետ ունեցած հանդիպումների ժամանակ պատրիարք Ներսեսը մշտապես ընդգծում էր այդ գաղափարը, այդ պատճառով էլ Լեյարդը մտավախություն էր արտահայտում, որ այդ ծրագրի ընդունումը կարող էր հանդեցնել Հայաստանի ինքնավարությանը, որը կավարտվի նրանով, որ Ռուսաստանը անեքսիայի կենթարկի Հայաստանը։

Մեկնաբանելով Դերբիին ուղարկած Լեյարդի այս հաղորդագրությունը՝ թուրք պատմաբանը գրում է, թե հայերը փորձում էին մխրճվել Օսմանյան կայսրության սրտի և թոքերի միջև, և հուսով էին, որ դրանում իրենց կօգնի Անգլիան[24], եվ եթե Անգլիան չօգնեց հայերին, դա բացատրվում է ոչ թե նրանով, որ անգլիացիները կցանկանային տեսնել ոչ թե հայկական պետու-

[24] R. S. Salahi, նշվ. աշխ., էջ 48—50։

թյունը վերականգնված, այլ այն հանգամանքով, որ ինքնավար Հայաստանը ձեռնտու լիներ իրենց շահերին։ Այդ պատճառով էլ հայերի և անգլիացիների հարցադրումները խնդրո առարկայի նկատմամբ երբեք չեն համընկել։

Անգլիայի համար այս շրջանում շահավետ էր պաշտպանել ոչ թե հայերին, այլ զուշնակցել Թուրքիայի հետ։ Լեյարդը մարտի 16-ին Լոնդոն ուղարկած ծածկագրում հաղորդում էր, որ ինքը զրույց է ունեցել Աբդուլ Համիդի հետ և նրան ներշնչել է, որ Թուրքիայի փրկության միակ միջոցը Անգլիայի հետ դաշնակցելն է[25]։

Մի քանի օր անց, 1878 թ. մարտի 20-ին Լեյարդը հաղորդել է Դերբիին, որ իր հետ հանդիպում է ունեցել Թուրքիայում բարձր պաշտոն վարող մի հայ և հայտնել է, որ հայերը տրամադրված են խիստ վճռական, և եթե վեհաժողովը չբավարարի իրենց պահանջները, իրենք ամբողջապես կհանձնվեն Ռուսաստանին և նույնիսկ կգերադասեն, որ Ռուսաստանը անեքսիայի ենթարկի Արևմտյան Հայաստանը։ Լեյարդը գրում է, թե ինքը չի խրախուսել իր զրուցակցի ձգտումը՝ «Տիգրանի հնագույն թագավորությունը վերականգնելու» խնդրում[26]։

Լեյարդը Դերբիին հիշեցնում էր, որ դեռևս մեկ տարի առաջ պատրիարք Ներսեսը իր հետ ունեցած հանդիպման ժամանակ նշել էր, որ թեև հայերը և թուրքերը միմյանց հետ զոյակցել չեն կարող, բայց նրանք կգերադասեին մնալ թուրքերի տիրապետության տակ, քան թե տրվեն Ռուսաստանին, որ հայերը պատրաստ էին նույնիսկ զինված ուժով պաշտպանել Թուրքիայի տարածքները։ Բայց 1878 թ. մարտի 17-ին Լեյարդի հետ ունեցած հանդիպման ժամանակ պատրիարքը հայտարարել է, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրից հետո իրադրությունն ամբողջապես փոխվել է, որ այժմ հայերը մեծապես զայրացած են իր դեմ՝ թուրքական կառավարությանը պաշտպանելու համար և «սպասնում են իրեն քարկոծել» և մեծ թվով հայեր պատրաստվում են արտագաղթել Ռուսաստանի տարածքները։ Այդ պատճառով պատրիարքը հուսա է հայտնել, որ նախատեսվող վեհաժողովում եվրոպական տերությունները կպնդեն, որպեսզի հայկական նահանգներին վարչական ինքնակառավարման իրավունք տրվի։

Պատրիարք Ներսեսը Լեյարդին է հանձնել հայերի անունից Բիսմարկին ուղարկած դիմումի պատճենը, որով նրանք Գերմանիայի պաշտպանությունն էին հայցում։ «Ես հարցրեցի պատրիարքին,—գրում է Լեյարդը,—թե ի՞նչ է հասկանում նա «Հայաստան» ասելով և Ասիայում Թուրքիայի ո՞ր մասն է ի նկատի առնում, որ պետք է ներառվի իր ակնկալած ինքնավար մարզում»։ Ներսես պատրիարքը պատասխանել է, որ հայերը ի նկատի ունեն Վանի և Սվազի վիլայեթները, Դիարբեքիրի մեծ մասը և Կիլիկիայի հայկական հին թագավորությունը։ Լեյարդն առարկել է, թե դա շատ մեծ տարածք է, որտեղ գերակշռում է մահմեդական բնակչությունը։ Պատրիարքը, չառարկելով դրան, նշել է, որ թուրքերն իրենք մեծապես դժգոհ են Բ. Դռան քաղաքականությունից, որ նրանք հոժարակամ կցանկանան ունենալ քրիստոնեական կառավարություն, որը կպաշտպանի նրանց կյանքն ու ունեցվածքը։ Լեյարդը կարծիք է հայտնել, որ վեհաժողովը չի պաշտպանի նման նախագիծը, մանավանդ, որ այդ Հայաստանը կարող է անեքսիայի ենթարկվել Ռուսաստանի կողմից։ Պատրիարքը պնդել է, որ հայերը այլևս չեն կարող մնալ թուրքերի իշխանության տակ և ավելացրել է, որ ինքը չի կարող դիմագրել նրանց ցանկությանը։

Լեյարդը, այդ մասին հաղորդելով Լոնդոն, Կրկին հիշեցնում է Դերբիին, որ ինքնավար Հայաստանը կարող է նվաճվել Ռուսաստանի կողմից և որ այդ պատճառով Անգլիան այդ նախագիծը չպիտի պաշտպանի։ Նա նշել է

---

25 Նույն տեղում, էջ 34։

26 British documents..., vol. I, p. 161—162.

նաև, որ պատրիարքը խնդրել է խիստ դաղտնի պահել զրույցի բովանդակությունը[27]։

Սուլթանի կողմից կաշառված Լեյարդի հակահայկական տրամադրվածությունը երկրորդական դեր չխաղաց Անգլիայի կառավարության մարտի վերջերին տեղի ունեցած նիստում, որտեղ որոշվեց Անգլիայի դիրքորոշումը Սան-Ստեֆանոյի պայմանագրի նկատմամբ։

Արժե նշել նաև մի հետաքրքիր փաստի մասին, եթե այն իրոք կարելի է փաստ համարել։ Թուրք պատմաբանները, և առաջին հերթին մեզ հայտնի Սալահին, պնդում են, որ իբր 1878 թ. ապրիլին մի խումբ հայեր ու վրացիներ, համագործակցված, դիմել էին Փոթիում անգլիական փոխհյուպատոս Թոմաս Հարդներին՝ սենսացիոն մի առաջարկով, որ իրենք նպատակ ունեն ստեղծել հայ-վրացական միասնական թագավորություն և խնդրում են դիմել դեսպան Հ. Լեյարդին՝ Անգլիայի օգնությունն ստանալու համար։ Այդ «փաստը» շրջանառության մեջ դրած աղբյուրները միաժամանակ նշում են, որ այդ «բանակցությունները» ոչ մի արդյունք չեն տվել[28]։ Պետք է ենթադրել, որ այդ վարկածը ևս անդիական զործակալների հերթական ճարպիկ խաղն էր՝ ուղղված դարձյալ Ռուսաստանի դեմ, քանի որ նկատի էր առնվում Արևելյան Հայաստանը և Վրաստանը դուրս բերել ռուսական տիրապետության տակից և ստեղծել մի միասնական պետություն։ Սա փորձ էր նաև թեական բնույթ հաղորդելու Արևմտյան Հայաստանին ուղղակի ինքնավարություն տալու գաղափարին։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի տեքստին ծանոթանալուց հետո Բիքոնսֆիլդն հայտարարեց, որ այն Թուրքիան վերածում է ամբողջապես Ռուսաստանից կախված երկրի[29]։ Իսկ Անգլիայի արտաքին գործերի նոր նախարար Ռոբերտ Սոլսբերին կտրուկ բողոք հայտնեց այդ պայմանագրի դեմ և, Ռուսաստանին սպառնալով պատերազմով, պահանջեց վերանայել այդ պայմանագիրը։ Եվ քանի որ դեռևս որոշված չէր միջազգային վեհաժողով հրավիրելու հարցը, 1878 թ. մարտի 21-ին նա խորհուրդ տվեց պրեմիեր-մինիստր Բիքոնսֆիլդին (Դիզրաելիին) պահանջել Թուրքիայից Անդիային տալ Լեմնոսը և Կիպրոսը՝ որպես Փոքր Ասիայում Ռուսաստանի դիրքերի ուժեղացման «բարոյական փոխհատուցում»։ Սոլսբերին հենվում էր Լեյարդի այն հավաստիացումների վրա, որ մարտի 6-ին սուլթանի հետ ունեցած զրույցի ժամանակ նա կարողացել էր ներշնչել սուլթանին, որ Թուրքիայի միակ փրկությունը դաշինքն է Անգլիայի հետ[30], և որ այդ դաշինքի գինը պետք է լիներ Լեմնոսը և Կիպրոսը Անգլիային տալը։ Իսկ Բիքոնսֆիլդն առաջարկում էր օկուպացնել ոչ միայն Կիպրոսը, այլև Ալեքսանդրիան[31]։

Սոլսբերին այն կարծիքին էր, որ տուլթանը Ռուսաստանի դեմ Անգլիայի պաշտպանությունն ստանալու համար ստիպված կլիներ համաձայնել այդ առաջարկին։ Լեմնոսի հարցը դեռևս մնում էր առկախ։

Սան-Ստեֆանոյի պայմանագիրը Անգլիան դիտում էր որպես իր պարտություն։ Դիվանագիտական շրջաններում դրա մեղքը բարդվեց Է. Դերբիի վրա։ Դա երկրորդական դեր չխաղաց, որպեսզի Դերբին հրաժարական տար և արտաքին գործերի նախարարի պաշտոնը հանձնվեր Սոլսբերիին։

Ռուս պատմաբանները Դերբիի հրաժարականը համարում են մեծ կորուստ Ռուսաստանի շահերի տեսակետից[32]։ Ճիշտ է, Դերբին չէր կիսում Բիքոնսֆիլդի բացահայտ թշնամական քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ, բայց Հայկական հարցում Դերբին միշտ ղեկավարվել է Անգ-

---

27 Նույն տեղում, էջ 159—161, 733—735։

28 R. S. Salahi, նշվ. աշխ., էջ 51։

29 Lord Kinross, նշվ. աշխ., էջ 525։

30 R. S. Salahi, նշվ. աշխ. էջ 33—34։

31 Christopher Walker, նշվ. աշխ., էջ 111։

32 Տե՛ս История дипломатии, т. II, М., 1963, с. 127.

լիայի վարած ավանդական հայտնի քաղաքականությամբ։ Նրա հրաժարականը էական դեր չխաղաց Հայկական հարցը որևէ կերպ լուծելու ընթացքի վրա։ Դերբին նույն դիրքորոշումն ուներ Հայկական հարցի նկատմամբ, ինչպիսին հետագայում պետք է դրսևորեր Սոլսբերին։

Բիքոնսֆիլդի պնդմամբ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը փակ քննարկման առարկա դարձավ Անգլիայի և Ռուսաստանի միջև։ 1878 թ. մայիսի 18(30)-ին Լոնդոնում Ռուսաստանի դեսպան Պ. Շուվալովը և Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Սոլսբերին ստորագրեցին գաղտնի համաձայնագիր Սան-Ստեֆանոյի ռուս-թուրքական նախնական պայմանագիրը Անգլիային ընդունելի դարձնելու համար։

Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածում՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերահսկողության վերաբերյալ պարունակող խոստումները Բեռլինի վեհաժողովում տրվեն ոչ թե բացառապես Ռուսաստանի, այլ նաև Անգլիայի անունից։ Փոխարենը Անգլիան պարտավորվում էր չիանգարել Ռուսաստանին ձեռք բերելու Բաթում նավահանգիստը։

Նա համաձայնեց նաև, որպեսզի Ռուսաստանը վեհաժողովում պնդի պահպանելու ստացուս քվո, այսինքն՝ պահպանի իր գրաված տարածքները, պայմանով, որ ապագայում Ռուսաստանի սահմանները չէին ընդարձակվելու Ասիական Թուրքիայում։ Անգլիան իր այդ պահանջը հիմնավորում էր նրանով, որ ռուսական սահմանների հետագա ընդարձակումը կարող էր վտանգել «Թուրքիայի բնակչության անդորրը»։ Իրականում Անգլիային անհանգստացնում էր Ասիական Թուրքիայում Ռուսաստանի դիրքերի հետագա ուժեղացման հնարավորությունը։ Ռուսաստանը դիմեց փոխհամաձայնության։ Նա այլևս հնարավորություն չուներ շարունակելու պատերազմը։

Այսպիսով, Անգլիայի ճնշման միջոցով տապանաքար դրվեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի վրա, և այնքան ծանր, որ այն այլևս տեղից շարժելու ոչ մի հեռանկար չունեցավ։

Պատմությունն արձանագրեց ռուսական դիվանագիտության պարտությունը։

1878 թ. մայիսի 30-ին Սոլսբերին տեղյակ պահեց Լեյարդին, որ Ռուսաստանի հետ ձեռք բերված համաձայնությամբ Սան-Ստեֆանոյի պայմանագրի այն հոդվածները, որոնք վերաբերում են եվրոպական Թուրքիային, «բավականաչափ ձևափոխվել են, որպեսզի լինեն ներդաշնակ եվրոպական մյուս երկրների և մասնավորապես Անգլիայի շահերին։ Այնուամենայնիվ,— շարունակում էր Սոլսբերին,—նման հեռանկար չկա պայմանագրի այն մասի վերաբերյալ, որն առնչվում է Ասիական Թուրքիային։ Բավականաչափ ակներև է, որ Ռուսաստանի կառավարությունը պատրաստ չէ նահանջելու Բաթումի և Արաքսի հյուսիս ընկած ամրոցների վերաբերյալ ձեռք բերված համաձայնությունից»։

Սոլսբերին դա վտանգավոր էր համարում Օսմանյան կայսրության Ասիական մարզերի և Անգլիայի շահերի համար և ավելացնում էր. «Անհնար է, որ Նորին մեծության կառավարությունն այս փոփոխություններին կարող է նայել անտարբերությամբ»։

Նշելով, որ Ասիական Թուրքիայի բնակչությունը բաղկացած է տարբեր շատ ազգերից, Սոլսբերին վտանգավոր էր համարում այնտեղ քաղաքական փոփոխություններ անցկացնելը, որոնք կարող էին սպառնալ Մեծ Բրիտանիայի շահերին։ Սոլսբերին Անգլիայի շահերի տեսակետից վտանգավոր էր համարում նաև Բաթումը, Կարսը և Արդահանը Ռուսաստանի ձեռքում թողնելը[33]։

Սոլսբերիի այս տեղեկությունները կոչված էին դեսպանի կողմնորոշման համար։ Դրանք կազմելու էին այն քաղաքականության հիմքը, որը վարելու էր Անգլիան առաջիկայում տեղի ունենալիք Բեռլինի վեհաժողովում։

---

[33] British documents..., vol. I, p. 177--178.

երբ անգլիական մամուլին հայտնի դարձավ մայիսի 30-ի անգլո-ռուսական գաղտնի պայմանագրի բովանդակությունը, սկսվեցին զանգվածային հարձակումներ Բիքոնսֆիլդի և Սոլսբերիի վրա՝ Ռուսաստանին իբր թե «զիջումներ» անելու համար։ Կասկած չկա, որ դա կազմակերպվել էր իր իսկ՝ Բիքոնսֆիլդի կողմից, որպեսզի հետագայում արդարացվեր մայիսի 30-ի համաձայնագրով Ռուսաստանին տրված խոստումներից հրաժարվելը։ Լեյարդին միաժամանակ հանձնարարվեց հայտնել սուլթանին, որ այդ համաձայնությունը որպես միջոց է ծառայեցվել Սան-Ստեֆանոյի պայմանագրից հանելու Թուրքիային առավել վտանգ սպառնացող հողվածները, և որ Անգլիայի կառավարությունը չի փոխել իր վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ։

Տեղյակ չլինելով դիվանագիտական այս խաղերին, հայոց պատրիարք Ներսեսը փորձեց կանխապես ձեռք բերել Անգլիայի հովանավորությունը Բեռլինի վեհաժողովում։ Նա չգիտեր, որ Անգլիան արդեն խոսք էր տվել սուլթանին «զենքի ուժով օգնել նրան՝ պաշտպանելու Թուրքիայի ասիական տիրույթները ռուսական ոտնձգություններից»։ Եվ երբ 1878 թ. մարտի 18-ին պատրիարքը դիմեց Լեյարդին, նա բացահայտ կերպով մերժվեց Հայ դատը պաշտպանելու՝ Անգլիայի նախկինում արված՝ հանդիսավոր խոստումներից և այդ մասին մարտի 20-ին հաղորդեց Դերբիին»[34]։

Չբավարարվելով իր կառավարությանը արդեն բազմիցս տված խորհուրդներով՝ Լեյարդը մարտի 25-ին Դերբիին հղած հեռագրում նորից է պնդում, որ հայերին ինքնավարություն տալը ձեռնտու չէ բրիտանական շահերին[35]։

Ներսես պատրիարքը չէր կարողացել ընկալել, որ Լեյարդը հայատյաց դիրքորոշում ունի և նրան էր կրկին ու կրկին դիմում՝ խնդրելով Անգլիայի կառավարության պաշտպանությունը[36]։ Պատրիարքին շփոթության էր մատնել Անգլիայի ձգտումը Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու ուղղությամբ։ Նա այդպես էլ չհասկացավ, որ Անգլիային հետաքրքրում էին ոչ թե հանուն հայերի բարենորոգումներ անցկացնելը, այլ այն մեխանիզմները, որոնք բարենորոգումներ անցկացնելիս հնարավորություն կտային Անգլիային Թուրքիան վերածելու երկրորդ Հնդկաստանի, որը բացառապես ենթարկվելու էր Անգլիային։ Բայց, գտնվելով հաճելի ինքնախաբեության մեջ, արևմտահայերը չէին կորցրել հույսերը՝ Բեռլինի վեհաժողովում հասնելու իրենց նպատակներին։ Փորձությունները դեռևս առջևում էին։

1878 թ. մայիսի 30-ին Ռուսաստանի հետ ձեռք բերած համաձայնությունից հետո, Բիքոնսֆիլդը հունիսի 4-ին Լեյարդի միջոցով վերջնագիր ներկայացրեց Աբդուլ Համիդին, որ եթե նա 48 ժամվա ընթացքում չհամաձայնի Անգլիայի հետ պաշտպանական ալյանս կնքելու, ապա Թուրքիան կզրկվի Անգլիայի բարեկամությունից, ինչը կհանգեցներ ռուսների կողմից Կ. Պոլսի գրավմանը և Օսմանյան կայսրության բաժանմանը։ Դաշինքը կնքելու դեպքում Անգլիան իր վրա պարտականություն էր վերցնում ռազմական ուժով թույլ չտալ Ռուսաստանին Ասիական Թուրքիայից որևէ այլ հող գրավելու։ Խոսքը գնում էր Արևմտյան Հայաստանի տարածքների մասին[37]։

Վստահ չլինելով, որ այս փաստարկները որոշիչ ազդեցություն կունենային սուլթանի վրա, Բիքոնսֆիլդն սպառնում էր, որ եթե Թուրքիան չընդունի իր առաջարկները, ապա Անգլիան կհարաժարվի Բեռլինի վեհաժողովում Թուրքիային պաշտպանելուց և իր անվտանգությունն ապահովելու համար ստիպված կլինի գրավել Կիպրոսը։

---

34 Նույն տեղում, էջ 161—162։

35 Նույն տեղում, էջ 162—163։

36 Նույն տեղում, էջ 168—169, 180, 181։

37 Տե՛ս „British documents...", vol. I, p. 179; R. S. Salahi. Նշվ. աշխ., էջ 38—39։

Աբդուլ Համիդը կատաղությունից եղունգներն էր կրծոտում, սակայն չհամաձայնելու հնարավորություն չուներ։ Նա ստիպված ձեռքերը վեր բարձրացրեց։

Կարելի էր նախանձել, թե ինչպիսի նրբությամբ, վճռականությամբ ու հետևողականությամբ էր գործում անգլիական դիվանագիտությունը։

Հունիսի 4-ին Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Հ. Լեյարդը և Թուրքիայի մեծ վեզիր Սավֆետ փաշան ստորագրեցին «Պաշտպանողական դաշնակցություն Անգլիայի և Թուրքիայի միջև», որն ուղղված էր Ռուսաստանի դեմ։ Հավաստելով պայմանավորվող կողմերի ցանկությունը՝ «ընդլայնելու և հաստատելու բարեկամության այն կապերը, որոնք բարեբախտաբար գոյություն ունեն երկու կայսրությունների միջև», համաձայնություն ձեռք բերվեց «կազմել պաշտպանողական դաշնակցության մի դաշնագիր, որը նպատակ ունի ապագայում ապահովելու Նորին մեծություն սուլթանի հողերի անվտանգությունն Ասիայում»։

Պայմանագրի առաջին հոդվածն ազդարարում էր. «Եթե Ռուսաստանը, իր ձեռքում պահելով Բաթումը, Արդահանը, Կարսը կամ նրանցից մեկն ու մեկը, այսուհետև երբևիցե փորձ անի տիրելու Ասիայում Ն.Կ.Մ. սուլթանի ունեցած այն երկրներից որևէ մի մասին, որոնք խաղաղության վերջնական դաշնագրով արդեն որոշվեն, այն ժամանակ Անգլիան պարտավորվում է միանալ Ն.Կ.Մ. սուլթանի հետ, զենքի ուժով այդ երկրները պաշտպանելու համար»։

Երկրորդ հոդվածով Թուրքիան իր համաձայնությունն էր տալիս, որպեսզի «Կիպրոս կղզին օկուպացվի և կառավարվի Անգլիայի կողմից»[38], Կղզու անեքսիան Անգլիան հիմնավորում էր Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի դեմ ստանձնած իր պարտավորությունները կատարելու անհրաժեշտությամբ։

Բիքոնֆիլդը Վիկտորիա թագուհուն գրած նամակում (1878 թ. մայիսի 5) Կիպրոսն անվանում էր «Արևմտյան Ասիայի բանալի»։ Հունիսի 4-ի պայմանագրով Կիպրոսն անեքսիայի ենթարկվեց Անգլիայի կողմից, չնայած այս փաստը Թագուհին վավերացրեց միայն 1914 թ. նոյեմբերի 5-ին։

Թուրքիայից խլելով մի «համեղ պատառ», որը հենակետ պետք է ծառայեր շուտով Եգիպտոսը զավթելու համար, Անգլիան փարիսեցիաբար հանդես էր գալիս Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պաշտպանությամբ, որպեսզի Ռուսաստանը որևէ հավակնություն չդրսևորեր Թուրքական տարածքների նկատմամբ։ Դա Անգլիայի ավանդական քաղաքականությունն էր, որը փայլելու էր Բեռլինի վեհաժողովում։

ВОПРОС САМОУПРАВЛЕНИЯ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ БЕРЛИНСКОГО КОНГРЕССА 1878 ГОДА

Академик НАН РА Г. А. ГАЛОЯН

Резюме

Выявленные нами документы из архивов разных стран, изданные на английском языке материалы британских и турецких архивов, новейшие исследования английских, турецких, равно как и армянских и русских историков, а также армянская периодика XIX века позволяют раскрыть подлинную картину политики великих держав в Армянском вопросе накануне Берлинского конгресса 1878 года. Победа

[38] British documents, vol. I, p. 398—399; Լեո, Հայոց հարցի վավերագրերը, էջ 103, 104։

России в русско-турецкой войне 1877—1878 гг. увенчалась заключением Сан-Стефанского прелиминарного договора, который закрепил за Россией завоеванные ею территории в Западной Армении. Однако под давлением Англии, Австро-Венгрии и других европейских держав Россия вынуждена была согласиться на пересмотр этого договора. Русско-английский договор от 30 мая 1878 года гарантировал интересы европейских держав в Малой Азии, а англо-турецкий договор от 4 июня 1878 года гарантировал поддержку Англией Турции на предстоящем конгрессе в Берлине. Руководители национально-освободительного движения армянского народа не сумели правильно сориентироваться в сложной ситуации, а турецкий султан Абдул Гамид II успешно использовал противоречия европейских держав на Ближнем Востоке и ошибки армянской дипломатии, обеспечив интересы турецкой империи. Западные армяне, находясь в состоянии приятного самообмана, тщетно надеялись, что на Берлинском конгрессе добьются самоуправления.